


ԲԱԺՆԵՊԻՆ
 Մ. ՆԱՀԱՆԳՈՒՑ ՀԱՄԱՐ
 Տարեկան \$1.50
 Կենցաղային 0.85
 ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ
 Տարեկան 10 Ցրանք
 ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ


Սմբազրութեան զրկուած
 նամակ կամ ծրար ետ
 չեն վերադարձուիր
 ԳԻՆ 3 ՍԵՆԹ.



Հայրենեաց

ՇԱՐԱԲԱՐԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ և ԲԱՂԱՔԱԿԱՆ



ՄԶԱԻՆ
ՄԱՅՈՒՆԱՆԻ
 AN ARMENIAN WEEKLY.
 16 MECHANIC STREET,
 WORCESTER, MASS.

ՀԱՍՏԷ
 AMERICAN HAI PUBLISHING Co
 P. O. Box 379, Worcester, Mass

Entered at the Post Office at
 Worcester, as Second-Class
 Mail Matter.

Subscription \$1.50 a Year.

ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱԺՆԵՊԻՆ ՀԱՐՑԸ

ՁԱՅՆ-ՀԱՅՐԵՆԵԱՑԻ մէջ Պ. Մանուկ
 Կրտսեանի կողմանէ կարգ մը յօդուած-
 ներ երեցան «Միանա՞ք որ ապրինք» խո-
 րագրով, անոնց մասին մեր ընելիք ան-
 սուծիւններուն խոստումը այժմ կու-
 գանք կատարել:

Ի՞նչ «Բաժանում» թէ Միանա՞ք» ի
 խնդիրներուն խոր թափանցել կարենա-
 լու. Համար էն առաջ հարկաւոր է ստու-
 զել հետեւեալները:

Նախ. Հայ քրիստոնէութիւնը իր
 կազմութեան մէջ այս ինչ անհասար
 ախ ինչ դասակարգը, մասնաւորութիւն
 ներ թէ, ազգային ամբողջական ինք-
 նութիւնը կը ներկայացունէ. Հայոց Եկե-
 ղեցին բանին բուն նշանակութիւնովը
 լուսաւորչական թէ Հայաստանեայց Ե-
 կեղեցի է:

Գերման եկեղեցիները լուստրական
 կը ինչո՞ւն. որովհետեւ արդէն գոյու-
 թիւն ունեցող եկեղեցիին կազմը յիշա-
 շարձք ու փոփոխեց լուստր, բարեկար-
 գութիւնով. իսկ Հայոց եկեղեցին իր
 սկզբնաւորութենէն հիմնուած է Հայոց
 ազգային կենսութիւնը միայ. ստացած է ազ-
 ցային ոգի. նուիրականացած է ազգային
 նահատակութիւնով. ու անոր իւրաքան-
 չիւր շամարիցը պահպանուած է ազ-
 ցային միահամուռ դասանալով. իս
 այնքան ազգային եղած է՝ որ նոյն իսկ
 իր մէջ առած է նոյնացուցած է Հայոց
 Հեթանոսութենէն ազգային շունչ ու-
 նեցող յիշատակներ և սօներ. ու այսպի-
 սով է որ Հայոց ազգն ու եկեղեցին ան-
 բաժան հոգեկեցիներ եղած են ու անոր
 Համար է որ նա է ապ է և կը մնայ
 Հայաստանեայց Եկեղեցի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅԵՂԱՓՈՒՆՈՒԹԻՒՆ
 1776 Յուլիս 4ին Բոննիւրը երկար
 խորհրդակցութենէ և վիճարանութենէ
 վերջ անկախութիւնը հրատարակեց: Այդ
 յայտարարութիւնը՝ որ մինչև հիմա այդ
 օրը Միացեալ Նահանգաց ամէն կողմե-
 րը կը կարգան, նոր աշխարհի ազա-
 տութեան հիմնաքարն և քաղաքական
 հասարակութեան ամենէն բարձր ար-
 տայտութիւնն է: 13 դաշնակից նա-
 հանքները այդ յայտարարութեամբ կը
 հաստատէին թէ կառավարութիւն մը
 այն ստեղծուի որինս որ է, երբ իւր
 հեղինակութիւնը կստանայ կառավար-
 եալներու հաւանութենէն, և թէ երբ
 կառավարութիւն մը անհաստատ իրա-
 ւանց վրայ կը բռնանայ, այդ անհաստե-
 րը պարտաւոր են ջնջել կառավարու-
 թիւնը և անոր տեղ ուրիշ մը հաստա-
 տել: Այս յայտարարութիւնը յեղափո-
 խութեան և ապագայ Հասարակագետու-
 թեան ոգին եղաւ: Նպատակէս դուրս է
 Ամերիկայի անկախութեան պատերազ-

միւրիւր. Բողոքական Հայերը որ և է
 նկատուումով ինքզինքնին Հայաստանեայց
 Եկեղեցւոյ գաւազն, թող ըլլա՞ն հեռա-
 ցած. կը նկատեն թէ ոչ. անոր Հան-
 դէպ արդիական սիրոյ, յարգանքի ու
 պարտականութեան զգացում կը տածեն
 կամ չէ:

Ո՞չ ոք կրնայ ուրանալ թէ Բողոքա-
 կան Հայն ալ իր քրիստոնէութիւնը կը
 պարտի Հայաստանեայց եկեղեցիին բա-
 ցարձակապէս, իր ուղղակի ծնունդը ան-
 կէ է. անկէ սերած է, սուանց անոր մենք
 այսօր Հասաններ, Մատաֆաններ կամ
 Փաթմաններ էինք, ուրեմն ծննդեամբ
 որդի ենք Հայաստանեայց Եկեղեցւոյ:

Որդի մը կրնայ քննադատել իր մայ-
 րը, կընայ բողոքել անոր դէմ, նոյն իսկ
 կրնայ ձգել տունը և բաժնուիլ իր մօր-
 մէն. նոյն ստեղծ, սակայն, պահել որ-
 դիական վերաբերմունք այնքան որքան
 կը ներքին հանգամանքները և խիղճը:

Կայ նաև պարագայ որ դաւաճ մը
 իրաւունք կըստանայ իր մօրմէն իւզը
 ամէն բարոյական կապ ու պարտակա-
 նութիւն. երբ վերջինը մեղադրելի է
 կամ քննադատելի. ոչ թէ իր տղիտու-
 թեանը, կամ անհանդուրժելի վարմուն-
 թին, այլ անբարոյականացած, պոռն-
 կացած, մոլութիւններու մէջ փնջացած
 ըլլալուն համար:

Արդ պէտք է ճշգրտել թէ Հայ Բողոքա-
 կանք, որոցմէ մին այս տողեր գրողն,
 Հայաստանեայց եկեղեցիին վրայ մայ-
 րութեան շնորհք ու արժանաւորութիւն
 կը տեսնեն, որ և է երախտիք, սէր ու
 պարտականութիւն կը գտնուին առ այն, կամ
 ոչ: Հայաստանեայց եկեղեցիին վրայ ե-
 դած քննադատութիւնները քրէական
 հանգամանք կը կրնան, թէ արտաքին
 ազդեցութիւնները, արհաւիրքները, ա-

ղէտները յառաջ բերել են ներկայ քն-
 նադատելի երևոյթները:

Սկզբունքի տեսակետով որ և է ազ-
 ցային եկեղեցիի մասին տարրեր տե-
 սութիւն ունինք. իսկ հայութեան այս
 կազմին, կացութեան ու կենսութեան մէջ
 Բրիտանութեան աւազանէն երկրորեակ
 ծնուած կրօնի և ազգութեան՝ այդ դու-
 ճակիցներուն՝ դուրսկեցութիւնը անհը-
 րաժեշտ կը գտնենք թէ կրօնի և թէ՛
 ազգութեան ապրելուն համար: չենք
 կրնար երեակայնի այնպիսի ճարտար
 անդամաւորութիւն մը, որով ստոնք կըտ-
 րուելի, դատուելի, և, ապրին առանձինն՝
 քաղաքական ու կրօնական այս հանգա-
 մանքներու տակ: Ի սէր ազգութեան! և
 ի սէր կրօնի! չխանգարենք այս երկո-
 ցունք այդ սիրալուստ գրկախառնումը.
 անոնց՝ միմեանց տուած փոխադարձ
 կենսաւորումը համարենք սրբութիւն
 սրբոց, անոնք իրարու իրարմէ առաւել
 հաւատարիմ ո՞չ ինչ կը գտնեն ամբողջ
 աշխարհի. Համայն բնութեան մէջ. ա-
 նոնք միասին աղօթեցին, միասին ար-
 ստուեցին եկեղեցւոյ խորանին առջեւ
 ու մէկտեղ մարտնչեցան, մէկտեղ ա-
 րիւն թափեցին պատերազմի դաշտը.
 կռակ կռակի՛ Հայրենեայց հողին հա-
 մար սուսերը բարձրացուցին և նահա-
 տակի գերեզմանոցը քով քովի պառկե-
 ցան խաչը գրկած. այս կենսակցութեան
 մէջ յուսոյ, հաւատարմի. սիրոյ. խանդի և
 կենսաւորութեան ծովը կայ անհուն. Հոն
 կրօնի և ազգութեան պահպանման հը-
 րաշքին 16 դարերու գաղտնիք կայ, Հա-
 յաստանեայց եկեղեցին Հայութեան տա-
 պանակ ուխտին է. անոր մէջ հրաշքի
 ոգին կայ. Ազգին և Յատուծոյ հողին կը
 Հանգչի Հոն. արկածալից ճամբաներէ,
 արհաւիրքներու անբախտներէ կը ճամ-

բորդէ այն, կը ծռի մէկ ու միւս կողմը.
 Իյնալու կը մօտենայ, բայց մի՛ անփորձ
 նախանձախնդիրներու, Ողաններու ձեռ-
 բերը դաչին անոր. անոր այդ բազմա-
 ստան իսկ յար կանգուն ու միշտ ան-
 սասան գիրքին առջև 16 դարեր կը խո-
 նարՀին ի պատկառ: Ո՞ր Հայ աշխարհի
 առջև պիտի չկանգնի ազնիւ Հպարտու-
 թեամբ՝ ցուցնելու Հայաստանեայց Եկե-
 ղեցին, այդ դարաւոր վիրաւոր իսկ
 միշտ յաղթական, միշտ անպարտելի
 և միշտ անկուռ անմահ էութիւնը. Գը-
 րիստոնէական հրաշքին այդ ակնյայտ,
 ամենափառաբանելի և կենդանի կոթո-
 դը. ո՞ր Հայ ազնիւ Հպարտութիւնով
 պիտի չ'գոչէ. պիտի չ'բերդէ, «Ասիկայ
 իմ մայրս է...!» Հոն կենսք մը կայ ներ-
 Հուն և անթափանցելի, Աստուծոյ փա-
 ռաց և զօրութեան համբերութիւնը կը
 քննայ Հոն. ու ո՞վ երանութեանս...!
 անոր արթննալու օրը...! ազգային խո-
 րին գիտակցութեան Գրիստոնէական ճշ-
 մարիտ ոգին արևս փայլ ցոլացման օրը.
 Հայութեան և Հայաստանեայց Եկեղե-
 ցիին այլակերպութեան օրը...!:

Երբ բողոքական Հայերը դէպի Հա-
 յաստանեայց Եկեղեցին պահեն զգա-
 ցումի եւ տրամադրութեան այսպիսի
 վերաբերմունք. անոնց բաժանումին,
 անոնց առանձին ժողովարաններուն ու
 քարոզի ժողովներուն մէջ որ և է անպա-
 պահութիւն չենք տեսներ. ընդհանակն
 պատմութիւնը պիտի ցուցնէ անոնց
 Հարկաւորութիւնը իսկ:

Հայաստանեայց եկեղեցւոյ մայրա-
 կան արժանեաց. դարմանի դժբախ-
 դութեանց ու Բողոքական Հայոց առ այն
 ունեցած և ցարդ զյացուած որդիական
 պարտականութեանց և կատարած ու կա-
 տարելիք դերի մասին ուրիշ առթիւ:
 Գ. Պ. ՉԻԹՃՆԱՆ

մին պատմութիւնը գրել: Յուլիս 4 ին
 Յեղափոխութիւնը կատարուած էր ար-
 դէն, նահանգներու ներկայացուցիչնե-
 րը ստորագրելով այդ հռչակաւոր թուղ-
 թը անկախ կառավարութիւն մը հաս-
 տատեցին որուն Հպատակեցան Ամերի-
 կացիք: Անգլիացիք իրենց զէնքի ուժով
 գրաւած տեղէն զատ ուրիշ տեղ Հպա-
 տակ չուէին. թէ նամուս արտաքսումը
 ժամանակի ինչիւր էր միայն: 8 երկար
 տարիներ տեւեց պատերազմը, շատ ան-
 դամ ամերիկացիք չարաչար պարտու-
 թիւն կրեցին, մատնիչներ, դաւաճան,
 ներ երեան եկան, ուսումնասիրական ծա-
 ներ սխալներ գործուեցան, որք նոյն
 իսկ վտանգեցին ազատութեան դատը.
 ձուած խոշմութիւնը գարմանեցին շա-
 րիքները: Անգամ մը ամենէն տեսակիւ
 համարուէր, Ուոշինգթոնի նահանգով բա-
 նակը յանկարծ ետ դառնալով ցուրտ
 զիչեր մը անցաւ սառի կտորներով ծած-
 կուած Տէլավար գետը և յարձակեցաւ
 անհոգ և տնպատրաստ թէ նամուս վրայ
 յաղթութիւնը որքան մեծ այնքան ալ
 անհրաժեշտ է յուսահատիլ սկսողներուն

Համար: Ամերիկայի ազատութեան պատ-
 մութիւնը լեցուն է կար ժողովրդի մը
 համար խրախուսիչ օրինակներով, երկար
 տարիներու տառապանքը, աւերումները
 չկրցան խախտել ապաստաններու ոգին,
 ընդհակառակը Հայրենիքի մեծ երկունքը
 ծնաւ այնպիսի կարող և անձնուէր ա-
 ռաջնորդներ թէ քաղաքական և թէ գի-
 նւորական ասպարէզներու համար որ
 Ամերիկայի պատմութեան սկզբները
 ուսանող մը հիացումով կը լեցուի: Ոչ
 ալ հասարակ գիտութիւնը դուրի էին
 քաջութենէ, վիրճինիոյ ձիւարները,
 Մասաչուսէցի հեռականները իրարու հետ
 կը մրցէին: Մերկութիւնը և անթու-
 թիւնը չկրցան այս մարդոց յաղթել,
 ձմրան ցուրտ օր մը, կըսէ պատմիչ մը,
 Ամերիկացի բոլորիկ գիտութիւնը վի-
 րաւորուած ոտքերու կարմիր հետքերով
 կերելէր բանակին ճամբան: Այս բարո-
 կական և ֆիզիքական քաջութիւնն էր
 որ միացած ձրանքի զիւսանալու
 թեանը Յրանսայի բարեկամութիւնը ա-
 պահովեցին և յաջողեցան զաշնագիր մը
 ստորագրել տալ անոր որով անկախու-
 թիւնը պաշտօնապէս կը ճանչցուէր եւ
 Ուոշինգթոն կուսի դաշտին վրայ Հա-

Ֆրանսի պէս կտրիճ զիւսանող կուսե-
 նար իր Ֆրանսական գունդերով: Յրան-
 սացուց օգնութեամբ շուտով վերջա-
 ցաւ պատրազմը, 1783 թն կնքուեցաւ Փա-
 րիզ խաղաղութեան դաշնագիրը որով
 պատերազմողները կը հաշտուէին և Ա-
 մերիկայի Միացեալ Նահանգները իրենց
 աստեղադարդը դրօշակով իրրեւ անկախ կա-
 ռավարութիւն կը մտնէին ազգաց շար-
 քը.
 * * *
 Մինչև հիմա նկարագրուած յեղա-
 փոխութիւնները կատարուած են այնպի-
 սի շրջաններու մէջ ուր կրօնի, լեզուի
 ցեղի և ընդհանուր շահերու տարբերու-
 թիւն չկայ, և թէ այսպիսի պարագանե-
 րու տակ կատարուած յեղափոխութեանց
 մէջ զժուար է անձնական կիրքերն ու
 շահերը զանազանի սկզբունքներէ եւ
 զազափարներէ, զիւրին է տեսնել թէ
 երբ տարբեր ցեղի, կրօնի և լեզուի վե-
 րաբերող ժողովուրդ մը կը յեղափոխի
 բռնաւոր կառավարութեան դէմ, այն
 ստեղծ ցեղային ու կրօնական կատարի
 կրիւնը, ատելութիւն, մոլորականութիւն
 թիւն այնքան պիտի չփոթեն զեպքերը
 որ անկարելի ըլլայ անոր մէջ յառաջա-

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Յեղափոխութիւնը խորագրով Բա- նասիրականը որ Ձայն-Հայրենեացի մէջ շարժմանը է ի վեր կերակրուց. այս պատուական ու մեր ժողովուրդին համար խիստ պիտանի աշխատութիւնը, փոխա- նակ լրագրին մէջ հրատարակելու առանձին գրքովով լոյս ընծայելու պատե- հութիւնը մը կուզէինք. ներկայ պայ- մաններուն տակ ոչ գրաշարը ոչ ալ գրերը կը բաւէին այդ գործին: Թեր- թին պահանջները առջին ու անդին ցը- րուած՝ հարկաւոր տողարկելով կը հա շուուի. բաժանորդներէն շատերը պատ- րաստ են վճարել եթէ մէկը անձամբ ի- րենց ներկայանայ և յիշեցունէ միայն: Մեր յարգելի խմբագիրն ալ իրեն մի- այնակութեանը համար փոքրիկ կանգա- տեան մը պէտք ունէր: Այս հարկեցու- ցիչ պարագաներով Ամերիկայի Հայ Հը- րատարակչական ընկերութեան վարչու- թիւնը որոշեց իր հրատարակած Ձայն- Հայրենեացի երեք շարքով վազանձ տայ: Ուստի Ձայն-Հայրենեացի երկրորդ տարեշրջանին առաջին թիւը պիտի ելլէ Մնակամբերի առաջին շարքուն. որ թեր- թին տարեգումն է:

Հայ Հրատարակչական Ընկ. Վարչութիւն

ՆՄԱՐԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձայն-Հայրենեացի սերնակներուն մէջ երբեմն ազգապաշտպան մարմինի մը հարկ անհրաժեշտութիւնը շեշտած ենք: Մա- սամբ Ամերիկայի Հայերը իրենց ընդհան- րական գիտակցութիւնով կը կազմեն այդ մարմինը միակամուռ. թէ և մեր նպատակը որոշ հայեցակետով անոր բիւ- րեղանայուն կը նային: Ահա այդ ազ- գապաշտպանութեան համար առկանին ինչ գործեր կան ընելիք. օրապահիկ մը տալ մեր Հայրենիքի օճախներուն, սիւ- ներուն, փրկել մեր Հայրենեաց կեանքի տարածութիւնը. Հայ ժողովուրդը անօթեթեմութեան մահացու ճակատին: Մեր յարգելի աշխատակցին, Տիար Արտաշէս Բէօյեանի բաց նամակը եւր Հայրենեաց ձեռնուր գտնուելու բաց սրտեր կը փնտ- ունէ: Վան այսօր Հային օխան 100 փա- րայի կը ծախուի ուր հայութիւնը կը հեծէ նաև ծայրահեղ շքաւորութեան տակ. ուսկից զտնեն 100 փարան և ապ- րին... Տիարանակերտի վիճակը նոյն- պէս սոսկալի է. Հաճինք նկարագրող ա- ղէկուոր նամակը կարգապէս Ձայն-Հայ- րենեացի մէջ: Ձէյթունի շրջականերու կացութիւնն ալ այսօր մեր աչքերուն առջև կը պատկերանայ: Կրնա՞ք անտար բեր կենալ: Ինչ կրնանք ընել... ի ձայն մը կը լսենք. պարտաճանաչ հայ- րենապետութեան կայծ մը ունինք ար- տերնուս մէջ, զայն վառ պահենք. զայն զոհացունենք. ընելով ինչ որ կրնանք: Թող ընտրուին, կազմուին կարօտեցոյ յանձնարարները. անկէ ետքը աւելի դիւրութեամբ կարող կըլլանք տեսնելու թէ ինչ կրնանք ընել:

Գէմ և յետագէմ երկու տարբերու կը ունենան, բնական է որ հոս յեղա- փոխութիւնը կիրքերով և կատարու- թեամբ կուրացած երբեմն յայտնուի ա- լելի վայրենի գողանարարք քան իր բունակալը: Նոյնքան հաւանական է որ ամենէն ղեկի ու անբարոյական կառա- վարութիւնն ալ փորձէ ապստամբները մարդկային ցեղի թշնամիներ և ինք- ղինք քաղաքակրթութեան պաշտպան ներկայացնել, անկարելի է խաբուիլ սա- կայն, քանի որ ապստամբութիւնը մեզ ծանօթ թուրք կառավարութեան գէմ է բայց եթէ յեղափոխութեան մը իրական միակ պատճառները միշտ աչքի առջեւ ունենանք, ապստամբող ժողովրդի մը մէջ արևելի և կրօնի ատելութիւնը երկ- րորդական պատճառներ պիտի գտնենք: Հիմա համառօտակի նկարագրենք յեղափոխութիւն մը որ իր կատարի կը- րնակուի, ներքին ցեղային ու կրօնա- կան անհաշտ ատելութեամբ և գործած անգթութիւններով և երկու կողմէն ալ ցոյց տուած քաջութեան տեսակներով եզակի կրնայ համարուիլ:

*** (Շարունակելի)

Այժմ թելադրութիւն մը կը ներկա- յենք Ամերիկայի Հայ ժողովուրդին: Այս թելադրութիւնը կառնենք Ձայն-Հայրեն- եացի ներկայ համարին մէջ երեցած հիւպատոսական տեղեկագրէն ի մասին: Ձէյթունի և իր շրջակայից վիճակին հիմնական դարման մը տալու: Կրօն հիւ- պատոսը թէ եթէ 1000 լիրա գործածուի այդ ժողովուրդին սերմացու ու անա- տուն տալով և ի փոխարէն շահ մ'ալ առնելով տարուէ տարի. խիստ շինիչ ձեռնուրութիւն մը կըլլայ թէ նիթա- պէս և թէ բարոյապէս:

Արդ եկէք Ամերիկայի Հայերս գոնէ մեր Հայրենեաց մէկ մասը հիմնապէս կան- գուն պահելու և վերակենդանացունելու համար հանգանակներ 1000 լիրա (85000) զուկեք յիշեցէ հիւպատոսին որ այդ ժո- ղովուրդին մէջ իր ըրած առաջադրու- թեանը համեմատ գործածէ զայն. եւ անկէ յառաջ գալիք տարեկան հարկերին հինգ շահն ալ, որ 50 լիրայ կընէ, առ- նուի և գործածուի դպրոցի համար. հոն այդ տեղերու յարմարացոյն վարին մէջ չենք շնորհք դպրոց մը բացուի ու հոգացուի այդ տարեկան շահովը: Փըր- կենք Հայ ժողովուրդի մէկ կարևոր մա- սը նիւթապէս, բարոյապէս ու մտաու- րապէս: Այս քանը կրնանք ընել: Զա- նանք:

Միացեալ Նահանգաց նախագահ- կան ընտրութեանց պայքարը սկսած է: Միտք Պրայան, Տէմոքրատիկներուն ընտ- րելին, իր զօրաւոր բարեկամներուն. ու իրեն հետեւելու ուզող կարևոր անձնաւո- թիւներու թախանձանքին վրայ, ու ինք զրեթէ անկնար դարձուցած է իր ընտ- րուիլը, այդ գայթակղութեան քարը իր բեմին ճակատէն վերցուց և զայն զը- րու անկանդոր անկիւն մը, բոլորովին երկրորդական ու թերևս տանորդական նշանակութիւն տալով անոր, ու ատոր յաջող արդեւոր տեսնուի սկսած է. ոսկիի հաւանաբող Տիմոքրատիկներ որ Պը- րայանէն բաժնուած էին սկսած են կա- մաց կամաց վերստին միանալ մայր մար միին: ու շատ մը կարևոր Րիփուպլիք- եաններ որոնք Նաիր. Մաքքիլի, աշա- պէս քան, կայսերական քաղաքակա- նութեան հակառակ են. անոնք ալ Պը- րայանի կողմը կանգնին. այսպէսով Պը- րայանին ընտրուելու հաւանականութիւ- նը երթալով կը զօրանայ: Անուշտ ընտրութեանց այս պայ- քարին մէջ անտարբեր չեն մնար Հայերը կը հետաքրքրուին, կուսուցանարեն եր- կու. կուսակցութեանց քաղաքականու- թիւնն ու անոնց ինչ օգուտ կամ ինչ վնասներ ունենան ու ըստ այնի կը պատ- րաստուին բռնէն օրը գիտակցօրէն իր քուէն տալու, իբր պարտաճանաչ, իբր խելօք և իբր ազնիւ քաղաքացի:

ԲԱՅ ՆԱՄԱԿ

Ամերիկայի Բողոք Հայոց

Միտքի Հայրենակիցք! Հայաստանէն մեր թշուառ եղբարց մասին հասած լուրերը աղէկուոր են. ու ցաւալի է ըսել որ սովը, սովամահ կորնչումը, ու մէկ խօսքով Պոփոսային կեանքը, հաստատուած սոսկալի իրողու- թիւններ են... մեծ են արհաւիրքը, բայց Հարենի գերեզմանատարած երկ- րին վրայ սաւառնող մահուան հրեշտա- տակին ստուերը թող կարող չըլլայ սար- սափեցնել զմեզ, ու նաև երբէք չըլ- լայ որ յուսահատութեան մատնուինք... Օգնենք Մեր Ազգայնոց...

Հոգ չէ թէ ինչ է մեր քաղաքական ու կուսակցական դաւանանքը, այս ընդ- հանուրին կեանքին բնաշնջման սպառ- նացող չարքին առջև միանանք:

Երբ մշտնջենապէս կը խնամենք մեր առանձին ընտանիքներն ի Հայրենիս, մեծ գործ մը ըրած կըլլանք: Բայց մեծա- գոյն առաքելութիւն է օգնել մեր խո- տակեր եղբարց... թող ամէն տեղ այս նպատակաւ յանձնարար կազմուին ա- մէն Հայէ առնուազն 25 սէնթ հաւա- քեն, որչափ կարելի է շուտ:

Ու յանձնարարք իրենց կազմու- թեան հետ մէկտեղ Ամերիկայի երկու Հայ թերթերուն յայտնեն իրենց կարծի- քը թէ ինչ միջոցով կուզեն որ զրկուին դրամներն, և մեծամասնութեան փա- փաքը կատարուի:

Ասոր հետ մէկտեղ ջանանք մեր գոր- ծն ընել, սիրցնել մեր ազգը ուրիշնե- րուն... Պրն. Չօպանանի ունեցած յա- ջողութիւնները գաղտնիք չեն, հասաւ Լաւագոյն նկարագրի և հաստատմանու- թեան ինչպէս նաև մեծ ազգասիրու- թեան արդիւնք... ջանանք ճանչցունել մեր ազնուութիւնը Ամերիկացոց. ու ոչ թէ անոնց մօտենանք իբրև մուրացիկ- ներ...:

Օ՛ն եղբայրներ և քոյրեր, ջանանք թափ մ'ալ տալ մեր ուժերուն, հաւատ- քը, յոյսը և սէրը մեզի զօրավիզ ու- նենալով...:

Արտաշէս Ե. Բէօյեան

ՁԷՅԹՈՒՆ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՆ

Ձէյթունի և շրջակայից վիճակին վը- րայով Կ. Պոլսոյ դեսպանի մը զրկուած հիւպատոսական տեղեկագրին է որ Ամե- րիկայէն յղուած նպատեց վերջին բաժ- նին բաշխման առթիւ ստացանք:

«Այս գումարն բաշխելու ձեռնարկին առթիւ Մարաշի միտնար մը. Մաքալմ ինձ տեղեկացուց թէ Ձէյթուն ատոր այնքան պէտք չունէր. անոր ամենէն կարօտ տեղն էր Ալապազ ու Մըլսալ. որք Ձէյթունի շրջակայից կը գտնուին: Քեար. 13 ին նամակով մը կըսէր թէ Ձէյթու- նի վիճակը շատ աւելի էր և էր բար- ատմամբ անցեալ տարին նպատեց բաժնուելու ասեմին: Այգիները Լաւ արդիւնք տուած էին. և առաջին անգա- մը ըլլալով. 1895 ի դէպքէն ի վեր. Ձէյ թունցիները ազատաբար գազին Ալապազ կէօքուս, մինչև Կեսարիա. իրենց չա- միչը փոխցին ցորենի հետ: Ու ատոր հետևանքով շատ աւելի Լաւ վիճակ մը ստացան քան որ ունէին զէպքէն առաջ: Յայտնի է թէ Ձէյթունի ժողովուրդը շատ աւելի բարեբաւտի է կա- ումարութեան ու զրոյցի Մահմէտա- կանաց հետ ունեցած իր ներկայ յարա- բերութեանը մէջ:

Իրաւ է որ շատ ազգասիրութիւն կայ սակայն նկատուելու է թէ այդ չքառու- րութիւնը միշտ կոպտ է: Ու քաղաքին եկեղեցիները և հարուստները են որ մա- սամբ կրնան նպատեց, ուրիշ միջոց չեմ տեսներ:

Խնդիրը բողոքովին տարբեր է շըր- շակայ գիւղերուն մասին. մասնաւորա- պէս Ալապազ, Միսալ և Ֆրնոզ. ամէն տարի հունձըր այնտղ կըլլէ. ու ցար մ'անալու չէ. որովհետև ամբողջ գա- լառը այնպէս ամայի և աւերակ է որ ժո- ղովուրդէն խիստ քիչերը յաջողք են կրկին ոտքի գալիս ելելի:

Միտնարները անոնց ամէն տարի կ'օգնեն, տուած են բաւական թուով ա- նասուններ. սերմացու, ուտելիք և հան- դերձ: Բայց իմ հաւատքս այն է թէ հիմ- նական դարման չկայ, բացի անկէ որ ա- տոնք թողուն իրենց լեռները. բան մը սակայն, որ իրենց զգացուններուն գէմ արբապղծութիւն է. միւս կողմէն շարու- նակ նպատեցներ տալ առանց փոխարէնը բան մը առնելու, խիստ վերաւորիչ է բա- րոյապէս. և այդպիսի երկիր մը այդպի- սի գործի ստապարէզ չկրնար ըլլալ: Նպատեցու միակ գործնական մի- ջոցն է անոնց օգնել սերմացուով և ա- նասունով. ու ի փոխարէն՝ տարուէ տա- րի շահ մը պահանջել: Եթէ 1000 լիրա այսպէս գործածուի, շատ Լաւ տպաւո- րութիւն պիտի ձգէ և կրնայ 100 ին 5 շահ մը բերել առնուազն:

ԸՆՏԱՆԻ ԵՍՐԿԸ

ՄԻՐԵՂ ԹԷ ՏԻՐԵԼ

Ուսկից կելին այդ առուակներն. վը- տակներն ու սահարկու գետերն. ո՞վ ա- նոնց զոյնութիւն կուտայ. և լեռներու և բլուրներու ստորտներէն կլկացող բիւ- րաւոր աղբերակներուն հարցուցէք...

Ո՞վ ծնունդ կուտայ ժողովուրդնե- րուն, ազգերուն և համայն մարդկու-

թեան. ընտանի-յարկերը գիտեն: Ո՞վ որ ժողովուրդ, ազգի ու մարդկու- թեան բարիքը կը մտածէ. պարտի ու- ուշադրութիւն տալ ընտանի-յարկերուն, որոցմէ կը ծնանին այն ամէնքը:

Ուսկից կսկսի և ո՞ր կը վերջանայ ընտանի յարկը. այս հարցումին մէկ- ծայրը կը կանգնին ցոյգ ամոթ՝ իսկ միւս ծայրը կը կանգնին մարդկային անհունին՝ ինչպէս գետեր ովկիանին մէջ: Ուրեմն հունաւորէն սկսիք զէպի անհունը եր- թալու:

Ինչպէս կը փափաքենք որ ըլլան մեր ժողովուրդը. մեր ազգը. ջանանք որ այդ փափաքին համեմատ կազմուին ընտանի յարկերը: Եթէ ոչ չեն քաղեր. ոչ ալ տամաակէն խաղողը:

Մեր և անձնագոհութիւն կը փափա- քենք ժողովուրդին, ազգին, մէջ. բայց ուսկից... Երբ մեր ընտանի յարկերը չեն հիմնուիր սիրոյ վրայ, երբ զայն կազմող երկու առաջին ամոթներն իրա- րու անձնուէր չեն. սիրոյ և անձնուի- րութեան ակերք ցամաք են. բարոյական երաշտութիւն կը տիրէ: Ամուսնութիւն առանց սիրոյ անբարոյականութեան պէս մի բան է. հան կեղծիքն ու խաբէու- թիւնը իրենց փեշերուն տակ ատելու- թիւնը կը սնուցանեն: Ինչ է իսաւար- եթէ ոչ լոյսին բոցակայութիւնը. Ինչ է ատելութիւն՝ եթէ ոչ սիրոյ բոցակայու- թիւնը: Սիրը բացակայ ընտանի յարկե- րէն յառաջ կուգան անբարոյականու- թիւն, շարիք: Անխառնութիւնները օրի- կանացիներ համար ստեղծուած է բռն- նապետութիւնը, և սիրեք զոյնութիւն չունեցող ընտանի յարկերուն մէջ է որ տեղի ինքզինքը կը ցուցնէ: Ինչ համե- տարութեամբ որ սիրոյ աստիճանը վար ըլլայ՝ նոյն համեմատութիւնով վեր կըլ- լէ տիրելու աստիճանը. սիրոյ մթնո- լորտին մէջ չապրի տիրողութիւնը:

Դալկուհարու ու ճղճիմ բոյնբոյն դաշտ մը կը տեսնես, մինչ նոյն անոնց սերմե- րը ուրիշ հուրթի դաշտերու մէջ կուռ- ճանան կը բարձրանան սաղարթագեղ ու ծաղկաւազ, զի առաջնայն մէջ կամ հողը պարարտ չէ և կամ երկինքը զլա- ցած է իւր ցոյն ու անձրև, այսպէս ալ ինչքան ընտանի յարկեր կան որոնք ցա- լին տուել կը մարմնացունեն. այն էսկ- ները որ սահմանուած էին երջանկաւա- լու և երջանկացունելու, անոնք որ ազն- ուութեան և առաքելութեան ընդունա- կութիւնը ունէին, ինկան ընտանի յարկի մը մէջ առանց սիրոյ, ամուսնութիւնը սիրոյ վրայ չկատարուեցաւ. կենակցու- թիւն մը կատարուեցաւ որ չես գիտեր ինչ լարողական հիմ ունէր, և ահա թը- շուառներու և վատասերածներու կամաք ներ կ'երեբան ընտանի յարկին մէջ:

Ամուսնանալ կ'ուզէք, կ'ամուսնա- նաք, բայց մեր ընտանի յարկին տակ ինչ հիմ կը դնէք, սիրի՞ թէ տիրել: Հայոց մէջ որքան ՄՍԻՊԵԱԼ ամուս- նութիւններ կը կատարուին, Նոր-Աշ- խարհէս մինչև Հին-Աշխարհ պատկե- րով զիրար կը հաւենին, նամակով ու խո կը կապեն, Բեւալ կարտնէն դուրս չ'ելած՝ հոն անմիջապէս պատկուի կ'ուզեն. — «Աման! չըլլայ! որ աղիկը ուրիշներ տես նէ, միտքը փոխէ, անգամ մը! վարդա- պետին ձեռքը գլխին դնել տանք նէ...»: Բայց ձեռքը գլխին գտնելովը ինչ կըլ- լայ որ սէր պիտի ստեղծուի: Ու Ամե- րիկայի Հայոց այս 4-5 տարիներու մէջ ունեցած ամուսնութիւններէն քանինե- րը ինչ ցաւալի պատմութիւններ ունին:

Գալ անգամ կուգեմ գրել ինչ է սէր:

Նազելի Պատկան

M. HARPOOTLIAN, Worcester, Mass

P. O. Box 470, ՍԵՂԱՆԱՌ ՓՈՌՈՒ ԳՐՈՑ

Տանկատանի բողոք քաղաքներն դը- րամ կը փոխադրենք: Մեր տան կեդրոնա- տեղութեան Կ. Պոլսու ու Սարբերգ մեծ. Յարութիւն է Փ. Սարբերգի կողմէն և եղբարք մեծ գումարով փոխ գիր առնողներուն մասնաւոր զեղծ կըլենք: Ամէն գծի վը- րայ նաւաւորի տոմակ կուտանք. տոմակ ու դրամ հեռագրով կը զրկենք Մարսել:

Մեր խանութիւնը հասցնէ 57 Hanover Street.

Միհրան Սարբերգի տան Ուսուր

Յուլի 28-ին Լորէնս Պրն. Պողոս Գրիգորեանի Պատկերասրահի Ժամանակ Ի նպաստ Հայ որբերի Հանգանակութիւն լինելով՝ գոյացած §22,60 և յանձնուեցաւ տեղւոյս որբանոցում ընկերութեան: Մասնակցողներն են պարտաւոր Յակոբ Գրիգորեան §7. Հարսու Գեւոր §5. Յովհաննէս միսեան §2. Պետրոս Աւագեան §1. Սարգիս Աւետիսեան §1. Գրիգոր Գրիգորեան §1. Աւետիս Թոխլըեան 750. Խաչիկ Վարդանեան 600. ձեռքէ մանր Հաւաքուած §4 25.

Այս տոժիւր շնորհակալութիւնս յայտ ներուս Հետ իրենց գործոց յարգութիւն կը մաղթեմ:

Աղօթարար Արսէն Վ. Վէհուեի

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Մարտիկանն որբանոց Ծրոնսացի մը նուիրած է 2000 Յր. որով Տ. Արշակ Զօպանեանի ի նպաստ Հայաստանի որբերուն կազմակերպած ցերեկոյթին (մաթինէ) զուտ Հասոյթը 4000 Յր. ք կանցին: — Իւնիօն սպահովագրական ընկերութեան Թուրքիոյ ընդհ. գործակալ Տ. Սիմոն Գոյսերեան իր գրասենեկին մէջ յանուն Աղբ. Հիւանդանոցի Հաստատած գանձանակի տարեկան Հասոյթը 4000 շրջ. յանձնել է Հոգաբարձութեան: Անցեալ տարի ալ միևնույն եղանակաւ կարևոր զուտ մը յանձնած էր:

— Ս. Լուսնորշի անասնաբուժեան օրը Հայ-Հոտովիականաց Պատրիարք էմմանուէլեան Արք. Ի Հրամանաւ՝ առաջին անգամ ըլլալով Պատրիարքի միջոցին Ողջոյն տըրուեր և Պատրիարքէն ետքն ալ Մաս ըստ նուեր է:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՔ

Աւստրիոյ մեծ դուքսերէն պատանի Լիօփոյտ յանցանք գործած ըլլալուն Համար կը յանդիմանուի իր Հարեւարայեան Կայսեր Սենեկապետ Մարգուսթօս Գօլ, մեծ դուքսին թեր կելլէ և նախա անք կուտայ Հարեւարայեանք վերջինք մեծամարտի կը Հրաւիրէ գառաշին, Մարգուսթ իոյս կուտայ մեծամարտը արգիլեալ ըլլալուն Համար. իր գունդին պաշտօնեայնեք իրեն կըսեն թէ պարտի մեծամարտի. ու, զինուորական պատուոյ ատեն մը այդ խնդիրը քննութեան կանոն է կը վճռէ թէ, քանի որ Մարգուսթ Թագու իրեն մեծամարտին դէմ ձեռմակ փետուր ցուցուցած (խուսափած է անկէ). իր աստիճանէն պէտք է զրկուի: Կայսրը վաւերացուցեց իր այդ որոշումը: Խնդը մարտը կարողացուի բանակէն. կիսոյ կայսեր սենեկակալութեան աստիճանէն. կը վճռուի պալատական կարգէն, և կարտաքսուի բոլոր կարևոր քըլպներու անգամակցութենէն, մեծամարտէ փախուստ տալուն պատճառաւ:

Հոս սպայտական սկզբունք մը կայ. — մի՛ նախատեր մէկը եթէ քաշութիւն չունիս անոր Հետ պատուոյ դաշտը ելլելու:

Եթէ այդ սպայտական ոգիէն զէթ մէկ մէկ փոքրիկ նշոյլ գտնուէր կարգ մը Հայ յեղափոխական խորտուիլակ սպայտական սրտերուն մէջ, որոնք կեղծ անունի տակ պահուած, այլ և այլ ջոշներու տակ ծածկուած՝ զրպարտութիւն ներ կը տարածեն. անմաքուր խոհանոցի պատուականէն դուրս փախչող գարշահոտութեան նման, մեր ազգային հրապարակը այսպէս չէր սպայտակներ:

Զինացիներուն կանանց վրայ ունեցած առակներէն երեքը Հետեւեալներն են: Մարդ թող ականջ զնէ կնոջ իսուքերուն. բայց երբէք չհաւատայ: — Կնոջ միտքը կարծր արծաթի՛ իսկ սիրտը մեղրամոմի կը նմանի: — Կինը դարձար կը նայի՝ որպէս զի իրեն նային:

Զինաստանին կը Հաւատայ թէ ամէն անգամ որ փռնգտայ իր կինը զինքը կը յիշէ: Երբ իր խօսակիցը կը փռնըգտայ ու ինքը ոչ, կը նախանձի անոր. որովհետև իր բարեկամին կինը զայն կը յիշէ, սակայն իր կինը մոռցեր է զինքը: Երբեք թայմը կը պատմէ թէ. տաք օր մը, կին մը թաշկինակ մը

կը թրջէ կուսայ իր ամուսնոյն որ զըլխարկին տակ անկուած զըլխուն վրայ զնէ զովացուներու Համար: Հետեւեալք այն կըլլայ որ մարդուն զըլխը պաղ կանոն ու ամրող օրը կը փռնգտայ, և ինքզինքը երջանիկ կը Համարի խորհելով թէ իր կինը շարունակ զինքը կը յիշէ:

Գերմանիոյ կայսրը անցեալ օր քարոզէր է բնարան անկուով, Ելից 18 Գլ. 11 Համար. «Երբ Մովսէս ձեռքերը վար կի ջեցուներ Ամազէի կը յաղթէր: Նիւթն էր, Սրբազան պատառխանատութիւնը և միջնորդութեան զօրութիւնը: Խօսելով Ձինաստան գացող զօրքերուն վրայ, ըսած է. «Անոնք մարդապանները պատժող բազուկը պիտի ըլլան. անոնք գորուոր բռնուցն են որուն տակ պիտի ճգմուի քառասկան ամբողջ: Ճմարիտ աղօթող Տրակոնը տակաւին դրօշակը տիղմին մէջ կը նետէ մինչև որ խաշին դրօշը բարձրացուեն պարսպին վրայ անգամ մի ևս Ամազէի ոգին կը բարձրանայ Հեռուոր Ասիոյ մէջ մեծ զօրութեամբ ու խորամանկութեամբ. սպաննութիւնով ու աւերածութիւնով է որ Եւրոպական արուեստին ու քաղաքակրթութեան առջև ճամբայ պիտի բացուի: Այդ է որ պիտի վարէ Քրիստոնէական սովորութեանց և քրիստոնէական Հաւատքի յաղթական շուն. ո՛ն յառաջ...: Վերստին կը լուսի աստուածային կոշը, Մեզի մարդիկներ ընտրեցէք որ երթան Ամազէիին Հետ պատերազմելու, տաք ու վճռակուն ճակատամարտը սկսած է. որպէս մեր եղբայրներէն ունան արժ. կրակին տակ են. և շատեր յառաջ կը խաղան դէպի թշնամիին ծովազրկեր: Մեք որ կը մնանք Հայրենեաց մէջ. կապուած ենք ուրիշ արեւելեան կապերով ոչ միայն զօրագուերերու զօրածողութեան կատարները. այլ նաև Հարժման մէջ շնչելու ենք կիրթ ժողովուրդի բանակ մը աղօթելու և բարեմայթիւնը մեր եղբայր Համար որ սուր է ձեռին Հարուածեն վայրի քառուր: Բոլոր ոչ քրիստոնեայ պետութիւնները աշխարհի երեսէն կորսուելու են: Մեր պատերազմը մէկ օրուան մէջ չվերջանար, թող ուրեմն մեր ձեռքերը չ'յոգնին կամ վար շինան մինչև որ յաղթանակը կատարուի»:

Սերպիոյ իրտասարգ թագաւորը Արգէիանի իր 16 տարեկան Հասակէն ի վեր այնքան անառակ, անբարոյական ու ցոփ կեանք անցուցած էր որ, երբ ամուսնանալ ուզեց և երեսը շտկեց Եւրոպական վեհապետաց տունները, դէպի Աւստրիա դէպի Գերմանիա, դէպի Ռուսիա և Ռուսի զուռ նայրը ըսին: Երբ յուսահատ, ամօթահար ու կոտորած սրտով ետ կը դառնար, Սերպիոյ մէջ տեղ մը աննման գեղեցիկ իսկ Հասարակ այրի մը տեսաւ. ու անոր աչքերը զինքը կայծակնահար ըրին. սիրահարեցաւ անոր ու, Ես ինչո՞ւ ելիր ի զուր աստ եւ անդ կը թափառեիմ, մինչ իմ երկրին մէջ այս գեղեցիկութեան թագուհին կայ:

Սերպիոյ իրտասարգ թագաւորը Արգէիանի իր 16 տարեկան Հասակէն ի վեր այնքան անառակ, անբարոյական ու ցոփ կեանք անցուցած էր որ, երբ ամուսնանալ ուզեց և երեսը շտկեց Եւրոպական վեհապետաց տունները, դէպի Աւստրիա դէպի Գերմանիա, դէպի Ռուսիա և Ռուսի զուռ նայրը ըսին: Երբ յուսահատ, ամօթահար ու կոտորած սրտով ետ կը դառնար, Սերպիոյ մէջ տեղ մը աննման գեղեցիկ իսկ Հասարակ այրի մը տեսաւ. ու անոր աչքերը զինքը կայծակնահար ըրին. սիրահարեցաւ անոր ու, Ես ինչո՞ւ ելիր ի զուր աստ եւ անդ կը թափառեիմ, մինչ իմ երկրին մէջ այս գեղեցիկութեան թագուհին կայ:

Սերպիոյ իրտասարգ թագաւորը Արգէիանի իր 16 տարեկան Հասակէն ի վեր այնքան անառակ, անբարոյական ու ցոփ կեանք անցուցած էր որ, երբ ամուսնանալ ուզեց և երեսը շտկեց Եւրոպական վեհապետաց տունները, դէպի Աւստրիա դէպի Գերմանիա, դէպի Ռուսիա և Ռուսի զուռ նայրը ըսին: Երբ յուսահատ, ամօթահար ու կոտորած սրտով ետ կը դառնար, Սերպիոյ մէջ տեղ մը աննման գեղեցիկ իսկ Հասարակ այրի մը տեսաւ. ու անոր աչքերը զինքը կայծակնահար ըրին. սիրահարեցաւ անոր ու, Ես ինչո՞ւ ելիր ի զուր աստ եւ անդ կը թափառեիմ, մինչ իմ երկրին մէջ այս գեղեցիկութեան թագուհին կայ:

Սերպիոյ իրտասարգ թագաւորը Արգէիանի իր 16 տարեկան Հասակէն ի վեր այնքան անառակ, անբարոյական ու ցոփ կեանք անցուցած էր որ, երբ ամուսնանալ ուզեց և երեսը շտկեց Եւրոպական վեհապետաց տունները, դէպի Աւստրիա դէպի Գերմանիա, դէպի Ռուսիա և Ռուսի զուռ նայրը ըսին: Երբ յուսահատ, ամօթահար ու կոտորած սրտով ետ կը դառնար, Սերպիոյ մէջ տեղ մը աննման գեղեցիկ իսկ Հասարակ այրի մը տեսաւ. ու անոր աչքերը զինքը կայծակնահար ըրին. սիրահարեցաւ անոր ու, Ես ինչո՞ւ ելիր ի զուր աստ եւ անդ կը թափառեիմ, մինչ իմ երկրին մէջ այս գեղեցիկութեան թագուհին կայ:

Շահը Փարիզի մէջ հեռաձայնին ու Հարժման պատկերին վրայ այնքան Հիացած է, անոնցմով այնքան կը զուարճանայ, որ իր խաղաղարարը զմայրը

երեսայի մը նման ժամանակին մեծ մասը անոնցմով կանցուցէ և նոյնպէս ըզմայրածը կը գործածէ իր նոր տեսած ու ստացած ինքնաշարժ կառքը:

ՔԱՂԱՔԱՂԱՑ

ՊՕՒՐԵՐԸ

Զօր. Պատեն Փառւլ, Մեֆթիկի Հեռուսին Համար կըսուի, թէ և ոչ Հաստատ, թէ վերաբրուած է:

Զօր. Քրիստեան Տիվիթ, Օրէնճցիներու ընդհանուր Հրամանատարն բոլորովին պաշարուած է. ու Հոտնուրի թէ կրնայ փախչելու ճար մը գտնուի:

Պօլիսի ընդհանուր Հրամանատար Զօր. Պօթա յանձնուելու տրամադրութեան մէջ է կըսուի:

Մարաշախ Բօպրիթ Թրանսվալի կառավարական պաշտօնատուներէն զըրաւած պաշտօնավիճակներուն մէջ տեսած է թէ Հաս մը Անգլիացի Հաշակաւոր քաղաքագէտներ ու փարսիներն անգամներ դաւաճանութիւնով Թրանսվալիին կ'օգնեն եղբր:

Կը վախճուի թէ Անգլիա խիստ օտնըր անակնկալներու նախնաց օրուան մէջ կը գտնուի Հարաւ. Ափրիկէի պատերազմին երեսին:

Փարիզի մէջ Պարսից Շահը երբ իր կառքը մտած էր պտոյտի ելլելու. մարդ մը փոխներու շղթան կարելով յառաջ նետուեցաւ և վեց Հարուածեանը ձեռքը կառքին անդուստին վեր ելաւ Շահը ըսպաններու: Շահը զարմանալի պաղարկուեց և մտքի շերտակներէն զըրաւած յաղորդեցաւ մարդուն երկու ձեռքերը անմիջապէս ամուր մը բռնելու. մինչև փոխներն Հասան և զայն առին տարին: Անշուշտ սա ևս մի նախնական էր: Ումպրիթ թագաւորի սպաննողը բանտին մէջ յայտարարած է թէ Անգլիանակները որոշեր են Չարին ալ սպաննուելու:

Սերպիոյ թագաւորին վրայ ալ անցեալ օր սպաննութեան փորձ կատարուեցաւ որը սակայն անյաջող ելաւ:

ՉԻՆԱՍՍԱՆ

Զինական խնդիրներուն մէջ Մ. Նահապետ կառավարութեան բռնած գիրքը ամենէն աւելի կորովի, կտրուկ ու վճռական է. մասնաւոր Պերլինի թերթերը այս մասին խիստ մեծ զոզուստներ կը շտայնեն: Արտաքին գործոց պաշտօնեայն Մր. Հէյ՝ վերջնագրով մը պահանջեց չինական կառավարութենէն որ Փեքինի Ամերիկեան դեսպան իր Ուիլիթոնի կառավարութեան Հետ Հաղորդակցութեան մէջ դուրս. այս ոչ թէ շնորհք այլ պարտականութիւն է չինաց կառավարութեան կողմանէ. և ասոր մերժումը ոչ բարեկամական արարք պիտի նշկատուի:

Մր. Հէյ Հիմնուելով չինաց կառավարութեան առաջարկին վրայ թէ Փեքինի բոլոր օտար պաշտօնատարները, կայսերական զօրաց պահպանութիւնով թինցին զրկուին. ըսաւ. եթէ չինաց կառավարութիւնը ինքզինքը կարող կզգայ օտար պաշտօնեայնեքը ապահովութեամբ Փեքինէն դուրս Հանելու, Կրնայ նաև անոնց միջոց տալ որ բանակցին իրենց կառավարութիւններուն Հետ, ուրեմն պարտական է այդ միջոցը ապու:

Թինցինէն դէպի Փեքին արաւող միջազգային բանակին վրայ գացող չինական զօրքերը իրենց ճամբուն վրայ 10,000 էն աւելի քրիստոնէական Հաւատքին դարձող չինացիներ սուրէ անցուցեր են:

Զինաստանի մէջ եղող մահմետականները ամէն կերպով կ'օտանդակեն. միջազգային բանակին. կառավարիկն անոնց Հետ միասին պատերազմի գնալ և իրենց մզիթները վերադարձուլ ու Հիւանդ զինուորներուն Հիւանդանոց ըլլալու տրամադրելի կընեն:

Զինացի մեծ բարեխաղաղը որ Զինաստանի փախած ու փախչողներն ասպատանած էր. վերադարձած է Զինաստան եւրոպացիներուն ու Ամերիկացի-

ներուն օգնելու. ու կըսուի թէ նա Հաս Հետեւողներ ունի և թէ մինչև մէկ միլիոն կուող կրնայ Հանել Պօքսերներու դէմ:

Կըսուի թէ Փեքինի մէջ իշխան Թուան կարևոր գումար մը նուէր որոշած էր իրեն բերուած իւրաքանչիւր օտարականի զըլխուն Համար, երբ այ բոլոր ձեռքի տակ ինկող օտարականներուն զըլխները կը Հատնին. և սակայն Հաստեր դրամ ստանալու տենջը ունին, կը փնտրեն աչքերը խոր ու քիթը բարձր չինացիներ, անոնց զըլխները կը կտրեն ու կը սանին եղբր:

Զինաստան վերջապէս կը զիջանի Մ. Նահապետ պահանջին, Փեքինի Ամերիկեան դեսպանին կը թուլատրուի որ Ուիլիթոնի կառավարութեան Հեռագրէ խորհրդանիշերով: Առաջին անգամն է որ դեսպաններու պաշարուելէն աստին դեսպան մը կը Հաղորդակցի իր կառավարութեան Հետ ու այդ խիստ նշանակիլ յաղթանակը տարաւ Մ. Մահապետ կառավարութիւնը:

Հեռագրին թարգմանութիւնը Հետեւեալն է:

«Ինչ պաշարման մէջ ենք, կացութիւնը ստաւել անտանի է. չինական կառավարութիւնը կը պնդէ որ մեկնիթ Փեքինէն, որ մահանալ կը նշանակէ. ամէն օր կայսերական զօրքերը մեր վրայ կը կրակեն: Անպատ քաղաքներու իսկ սակաւ ուղղամթեք ու պաշար ունինք: Երկու յառաջիկան արտաքին գործոց պաշտօնեաներ զըլխատուեցան»:

Ամերիկայի դեսպանը Փեքինէն գաղտնապէս դուրս դրկած նամակով մը կաղաղակէ Պեքինի թագաւորին՝ կամ փութով կամ երբէք. պաշարուած ենք քրիստոնէական դեսպանատան մէջ. Փեքինի մէջ կառավարութիւն գոյութիւն չունի, բացի զինուորական պետերէ որոնք որոշած են օտարականները բնաջինջ ընելու»:

Թուսիա միջազգային բանակին մասնակցեցնելու զատ, Մանչուրայի մէջ ալ կուր ունի Չինաց կանոնաւոր բանակին Հետ. ու երբեմն մեծ կուստներ կը կըրէ: Մանչուրիա չինաստանի մէջ ուսուցանուող և Պեքինի մէջ չինացիները կը ջանան Թուսները դուրս գրել:

Փեքինի վրայ քայող միջազգային բանակը չինացի խիստ մեծ զօրութեան մը Հետ տաք ճակատամարտի մը կը բռնուի. ուր առաջիններէն 600 Հոգի կիչնան որոց մեծագոյն մասը ձաքանցի եւ ուսու են:

Միջազգային բանակին մէջ տակաւին Համաձայնութիւն գոյացած չէ. Ամերիկացիք, Անգլիացիք ու ձաքանցիք մէկ և Թուսները, Յրանսացիք ու Գերմանացիք ալ ուրիշ ուղղութիւնով կը վարուին:

ԹԻՒՐԻՔԻԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Սուլթանը անցեալ ուրբաթի Սելամ-ըքին Հրամայեց որ պալատէն ու անոր շրջականերէն Հեռացուին բոլոր օտարականները, որոնք անմիջապէս կարտաքսուին որոց մէջ կը գտնուին Հաստ կարևոր անձնաւորութիւններ, եւ այս բանէն Հատ վշտացած են դեսպանները: Այս վարմունքին պատճառ կը Համարուի, անշուշտ, Ումպրիթ թագաւորին սպաննուելը և Շահին վրայ սպաննութեան փորձ կատարուելը:

Նիւ-եորք Սնտէյ ձրնալին Լօստոնէն կը Հեռագրուի թէ, Սուլթանը որ առաջարկած էր Զինաստան գորք զրկող պետութիւններուն արպէ գի իրեն ալ

արտօնուեր որ ինքն ալ զօրք զրկեր ալ քան զանոթ անօրէն շինացիները իրենց բարբարոսական արարքներուն համար պատժելու զորքը եւ որ քաղաքավարութեամբ մերժուած էր. այդ պարագան հոն (Լօնտօն) պաշտօնական շրջանակներու մէջ այն վարդ կարգէ թէ Սուլթանը կրկին պիտի սկսի հայերը կոտորելու:

Իբր թէ դուռը ըսեր է եղեր որ, Ռուսիա վերջերս գաղտնապէս հասկացուցած էր Պուլկարիոյ, Սերպիոյ, Գարատաղի, Յունաստանի, Մակեդոնիացիներուն և Հայերուն որ այս պարագաներուն զգոյշ ու հանդարտ կենան. երբէք որ և յեզափոխական կամ թշնամական նշմարանք ցոյց չտան. որովհետեւ Ձիւկական խնդրով իր (առևտրոյ) ձեռքերը այնքան լի են որ չկրնար թիւրքերոյ հետ ալ գործ բանալ: Ահա այս պարագան, կրտսեր Սուլթանը գրգռած է որ կրկին մոլեռանդութեան կայծը բորբոքել տայ ամբողջ թիւրք կայսրութեան մահամտականութեան մէջ որ ելլեն ջարդեն կողոպտեն Սիւրիացիները և Հայերը, նամանաւանդ հայերը:

Այս լուրը վախերը կը հաստատուին (այդ պաշտօնական շրջանակաց մէջ) մանաւանդ անով որ այն վայրագ պաշտօնականները որոնք Հայկական կոտորածներուն մէջ ամենէն աւելի անագորոյն զտնուած էին և որոնք զեսպաններու խիստ պահանջներուն վրայ պաշտօնակեցած էին, ինչպէս էինք փաշան. հիմա էինք ալ, ամենքն ալ պաշտօնի զրկուել սկսած են Սուլթանին կողմէն:

Մեր անցեալ թուով ըրած աղբը կը կրկնենք, որ յեզափոխական մարմին որ այս պարագաներուն տակ Սուլթանը գրգռելու առիթ մատակարարէ, անոր պատասխանատուութիւնը ահաւոր պիտի ըլլայ:

Ռուսիա, Ֆրանսա ու թիւրքիա վաճառականական նոր դաշնագրութիւն մը կնքելու համար ներկայացուցչական ժողով մը կազմելու էին Կ. Պոլսոյ մէջ, առջի երկու կառավարութեանց ներկայացուցիչները կը պնդեն եղեր որ իրենց երկիրներուն մէջ թիւրքիա չունենայ պէտք իրաւասութիւնները ինչ որ իրենք կուզեն ունենալ թիւրքերոյ մէջ. այս պատճառաւ վերջոյն ներկայացուցիչները ժողովը առաջի վիճակի մէջ ձգած են ու յասնի չէ թէ վերջնական համաձայնութեան մը պիտի յանգին թէ ոչ:

Սուլթանը որ խոստացած էր Օգոստոս 3 ին հաստատուել Մ. Նահանգաց 100,000 տօլարի պահանջը որը անցնելու չվճարեց. Մ. Նահանգաց Կ. Պոլսոյ ներկայացուցիչը վերստին գրան զօրաւոր պահանջագիր մը զրկած ու անմիջական վճարում պահանջած է:

ԳՈՐԾԱՌՈՐ ԿՈՒՉՈՒՒ:

Յիշատակ 58 Կրին սթրիտի կօշկակարի խանութիս մէջ գործաւոր կուլուեմ, զիմեւ անձամբ կամ նամակաւ խառնութիւն: Վարձքը գոհացուցիչ է: Բարեւոյ կաւճեան

ԿԸ ՓՆՏՈՒՒՒՒ

Գաբօ Գաբօեան (Կիրակոսեան) Բեսրիկցի: 12 տարիէ ի վեր է որ կինը ձգած հեռացած է. այժմ իր կինը հոս եկած է իր ամուսինը գտնելու անոնք որ ունէ տեղեկութիւն ունին այդ անձին վրայով կը խնդրուի որ գրեն խմբագրութեանս:

ՆՈՐ ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ Կ Ա Մ

Հաւաքածոյ. Ազգ. Երգերու: Մասն առաջին. գին 2 Փրք. Հասցէ: A. ZARPHANELIAN, Varna, Bulgaria.

ՊԱՏՈՒՀԱՆԻՆ ՄՈՒՐ ՀԱԿԸ

Բարեբաղնիքի Եօթը արարուած իրական կեանքէ առնուած և օրինակ զորք մը է, իւր ամբողջութեամբ խիստ հետաքրքրական ու շահեկան: Դիմել առ Գ. Զարֆանէլեան վերի Հասցէով:

"A LOST ART."

Անուն է այս գրքոյի՝ որուն երեւումը մեծ դժուարութիւն հաշուեցաւ տեղական մամուլին կողմէն. կը խօսի Արեւելեան Գորգերու վրայ ընդհանուր կերպով, ինչպէս նաև առանձին առանձին կը բացատրէ զանազան անուններով ճանչցուած գորգերը: Ամենայն դէպքում է ձեր Ամերիկացի բարեկամաց, որոնք Արեւելեան գորգեր ունին իրենց տուներու մէջ: Գինը 30 Սենթ

Դիմել Հեղինակի Հասցէին. ARDASHES H. KELEIAN, With L. S. Ayres & Co., Indianapolis, Ind.

231 Իսթ 28 րդ. Փողոց Նիւ-Ենթ

Մ. Գաղանձեան և Պ. Մուշեղեան:

Կը վաճառենք տեղական ու արևելեան ամէն տեսակ նպարեղէններ. Հօլ-սթիլի գնով. զիմեցէք մեզի անձամբ կամ նամակաւ: շուտով կը զրկենք ուր որ ուզուի:

Ահա մեր գներուն ցանկը իւրաքանչիւր փառուս սէնթի հաշուով. ձիթապտուղ 9. Ուտորի պուլիտր շատ մաքուր 3 1/2. Հայկական պանիր 10. Լօթուճ շերտեր 10. Ծամ ֆուտի 26. Պամեայ 28. Ճերմակ ֆասիկայ 5. Նուշ 18. Չամիչ 8. Սալոր 5. Ուսյուր 15. Ընկոյզ 14. Ֆետիս 13. Սուրմա 5. Լեպուպու շաքար 20. Հինա 50 Տաճկական սօր 7. Սիւսա 5. Գառնի միս տեղա մորթուած 7. Ուսյուրի պատրմայ և Սուճուր 35. Թէ աղի և թէ անյի լեպուպու 15. Լեպուպուի ամենալաւը 28. սէնթ ամէն մէկ փառուսը: Ունինք նաև Բիմիոն. Չաման. Տարչին. Լեմոն թուզի և տեղական սպրանց ամէն տեսակը:

Անձնական և Շահաւոր Գործ

Վեց տարիներէ ի վեր շարունակած փայտի գործս կը ծախեմ խիստ յարմար և զիւրաւատելի գնով, գործանոցս կը գտնուի 391 Ֆառնթէյն փողոց Փրովիտէնս:

Աւելորդ է ըսել թէ անձնական գործի փափագողներու համար հազուադէպ պատահութիւն է: Դիմել առ

Ահարոն Իշխանեան

ՀԱՍՏԱՍՏՈՆ

Հայ ժողովրդական երգերի Չափաբերալ Պիտի բաղկանայ 6 մեծադիր տետրակներէ: Առաջինը արդէն լոյս տեսած է: Բաժանորդագրութեան պայմաններն են:

6 Տետրակին համար \$ 6 1/2
3 ,, ,, \$ 3 1/2
1 ,, ,, \$ 1,25

DIRECTION des CHANTS ARMÉNIENS 5 Rue Chateaudun, Paris, France.

ԻՐԱՒՈՒՆԻ

Լրագիր Ազգային և Բարեբաղնիքի: Տարեկան բաժանորդագրին է 12 Փրք. Հասցէ: REDACTION DE JOURNAL, Iravounk, Varna, Bulgaria.

Ն Ե Տ Ա

Վէպ Պուլկարական յեղափոխական կեանքէն: Գին 50 սանթիմ (10 սէնթ) զիմեւ իրաւունքի խմբագրութեանս:

« Հ Ա Յ Ե Լ Ի »

Շարաթաթերթ. Ազգային և Զուգընդակական: Այս երգիծախառն շարաթաթերթը, իր գնահատելի բնորոշութեանցը համար՝ մասնաւորապէս յանձնարարելի է:

Բաժնեգրին է տարեկան 12 Փրանք Դիմել Առ Տիրան Փափագեան Yeldiz Tabia Varna: (Bulgaria)

REDACTION DU HAMALSARAN, 3 Place Monge, Paris, France.

Ա.ՉԳ

Կը ծանուցանենք Հայ Հասարակութեան թէ՛ Պոսթոնի Թայլըր փողոցին մէջ նոր խանութ մը բացած ենք, ուր կը վաճառուին ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԸՆՏԻՐ ՆՊԱՐԵՂԵՆՆԵՐ ՉԱՓԱՌՈՐ ԳՆԵՐՈՎ:

Յանձնարարութիւնը կը կատարուին փութով և խնամով: ԵՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ, ԱՐԱՄ ԱՍԲԱՆՉ

Մեր Հասցէն է Tyler Grocery Co. 113 Tyler St. Boston Mass.

ՀԱՅ ԳՐԱՎԱՅԱՌԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՐՈՒՄ

Պօլսոյ, Վենետիկի, Մ. Մամուրեանի և Տիկին Բաֆֆիի հետ մասնաւոր կարգադրութիւն ըրած՝ նաև ուրիշ գրատուններէ ալ գրքեր բերել տարու միջոցները ձեռք բերած ըլլալով կուզամ գրասէր հայրենակիցներու ծանուցանել թէ իրենց փափագած գրքերը սովորական գնով կարճ ժամանակի մը մէջ՝ բերել տալու պատրաստ եմ. քիչ ժամանակ վերջը մեր քով արդէն պահեստի պիտի ունենանք ամէն ժողովրդական գրանց շաք մը:

Փափագողաց գրացուցակ կը լքրկենք: Մեծ քանակութեամբ գրքերը ներմասնաւոր գնով կը կրնանք:

Դիմել Ն. ՊԵՏԻՇԵԱՆ 390 P O Box LOWELL MASS

Բ Ա Յ Տ Ի Ի

« ԴԱԻԻԹ-ԲԷԿ » Ա. Բ. Կ Հատոր վերջաւորուած և « ԿԱՅՄԵՐ » Բ. Հատոր լիակատար:

Իւրաքանչիւր բաժանորդագրին է 5 Շիլին:

Լոյս կ'տեսնեն ներկայ 1900 թիւ ընթացքում և անմիջապէս կուղարկուին բաժանորդներին որպէս « ՍԱՄՈՒԷԼԸ » եղաւ:

Բաֆֆիի միւս երկերը ունենալ ցանկացողները պիտի ուղղակի դիմեն մեզ: Մեզինք կարելի է ստանալու նաև ներմասնաւոր Հայրիկի, Երեմիայի, Պետրոս Դուրեանի և ուրիշ նշանաւոր գրուածքներ: Հասցէ:

MME. RAFFI,

47 Uxbridge Road, London, W., England.

Ա.ՉԳ

ԸՆՏԻՐ ՊՈՒԼԿԱՐ

Ուտորի մէջ երկար տարիներէ ի վեր հաստատուած ենք մեր յատուկ պուլկարի գործարարը: Սայն գործին մէջ մեծ փորձառութիւն ունենալով, ամենայն ցարեւէ կը պատրաստենք ընտիր սր, շիւր, որ իր մաքրութեամբ և ուրիշ լաւ յատկութիւններով՝ տանտիրներուն և ճաշարանատէրներու գնահատութեան արժանացած է: Կը պատրաստենք նաև նոյնպէս ընտիր ձեռած և կորկոս:

Ուտար ամեն ով որ կուզէ ընտիր և սխորժամ կերակուր ինչպէս պուլկարի և ձեռած ունենալ, թող զիմեւ ուղղակի մեզ: Ապագայներէ փութով կը կատարուին. մանրամասն տեղեկութեանց համար պէտք է դիմել հետեւի Հասցէին. Ուտոր, Պուլկարի Միացեալ Ընկ. 151 Իւնիոն սթ., Ուսթըր Մաս. Տաճկահայ տեսակ տեսակ սպրանքներ ալ կը ծախենք:

Գ Ր Ա Տ Ո Ւ Ն

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

« Ազգայնոց մէջ ընթերցանութիւն տարածել » Գրագրանի նպատակը լինելով, ի գիտութիւն նոր կարգալ (և մասնաւորապէս անոնք՝ որ չ'կրցինք զրկել գրքերը. մեր քով սպասած ըլլալուն համար) սովորողներու կը յայտարարենք թէ՛ նոր ստացեր ու կը վաճառենք. Ընթերցարան (Մամուրեանի) նոր ընթերցարան (Պոնտուգեանի) Մանկական Պարտեզ (Պալպանի) Մայրենիներու (Ա. և Գ. տարի) և Այլերկերներ:

Նաև կը վաճառէ Ազգային Երգարան՝ Հայկական Ձիւնանշան, Հին և Նոր Արանց, Սասնոյ և Կ. Պօլսոյ Զարգերու լուսանկարները: — Կանխիկ վճարելի: Դիմել՝ վարչութեան հետեւի Հասցէով: ARM. LIBRARY, 63 Laurel Street, Worcester, Mass.

ԱՆԱՀԻՏ

Հանդէս Ազգային, Գրական և Գեղարուեստական. բացուած է Բրք. տարուայ Բաժանորդագրութիւնը:

Հասցէ ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆՆԱՆ 6 Place de L'odeon Paris

« ՀԱՆԴԷՍ ՍԱՄՈՐԵԱՆ »

ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

Տարեկան բաժնեգրին է՝ 10 Փրանք (2 Տօլար) Դիմել՝ հետեւի Հասցէին:

A la Redaction de La Revue «Hantess», Vienne (Autriche) 71 1/2 Mechitharistengasse 4.

ՀԱՄԱՍՏԱՐԱՆ

Գիտական և Գրական (Ամսօրեր)

Իր անունին համեմատ Գրական և Գիտական ամէն կարգի խնդրոց վրայ գեղեցիկ ուսումնասիրութիւններ կը պատուակէ, Հայ ընթերցարանաց առձեռն համալսարան մը ըլլալու հաւատին կուտայ:

Տնօրէն-Ստագրիներ

Մ. Պաղտասարեան և Եովհ. Շաւարշ HAMALSARAN, 4, rue Ortolan 4, (Place Monge) Paris.

ԲԱՉՄԱՎԷՊ

Հանդիսարան Ամառգիր Տարեկան Բաժանորդագրին է 10 Փր. Հասցէն է: REDACTION DE LA REVUE, Pazmareb, St. Lazar Venis, Italie.

ԲԱՆԱՍԻՐ

Միշտ, ՏԱՄԱՍԵԱՆԻ ԵՐԳԵՐ Ազգային եւ Գեղարուեստական ԱՄԳԻ ԿԵՆՏՐՈՆ Գին 25 Սենթ Ստագրի խմբագրութեան Հասցէով S. RUSDIKIAN, WORCESTER, MASS

ԿԱՐԻՈՐ Ա.ՉԳ

Ճաշակի յարմար պատուական պառլամ (Ուսյուրի Պատրմայ) կը պատրաստեմ. գինն է՝ փառուսը 35 սէնթ. վաճառման կեդրոնատեղին:

S. ՍԵՄԷՐՃԵԱՆ

113 TYLER ST BOSTON MASS

Ա.ՉԳ

Ուսթ Չօպօքընի Հայ. Մարդ. Կաճառը միանալով Փաթարանի Հայ. Գաղթ. Միութեան հետ՝ մեծ դաշտային հանդէս մը պիտի տան Սեպ. 16 ին կիրակի օր ի Յիւուր Բարք. Ուսթ Չօպօքընի Ի զիմաց Յանձնարարութիւն Ատենադպիր Հ. Սասունեան